Հավելված
ՀՀ փոխվարչապետի N 110 - Ա
որոշման

ԾՐԱԳԻՐ
«ՎԱՉԵ ԵՎ ԹԱՄԱՐ ՄԱՆՈՒԿԵԱՆ» ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ ՀԱՐԱԿԻՑ ՀԱՆՐԱՅԻՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԿԱԹԻԼԱՅԻՆ ՈՌՈԳՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԸՆԹԱՑԻԿ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ ԵՎ ՏԱՐԱԾՔԻ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ»

1.	Ծրագրի նպատակը	Մայր Աթոռ սուրբ Էջմիածնի «Վաչե և Թամար Մանուկեան» մատենադարանի հարակից հանրային տարածքում կաթիլային ոռոգման համակարգի ընթացիկ վերանորոգում, վնասված բույսերի փոխարինում նորով, խոտածածկ տարածքի վերականգնում, 2025 թվականի սեզոնային հողային աշխատանքների շրջանում տարածքի հողային, այգեգործական և բարեկարգման աշխատանքների ապահովում
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Օրենքով սահմանված կարգով օգտվել ՀՀ հարկերի, տուրքերի և պարտադիր վճարների գծով արտոնություններից
3.	Բարեգործը	Հայկական բարեգործական ընդհանուր միություն (ՀԲԸՄ), 55 Արևելք, 59-րդ փող. Նյու Յորք, NY 10022-1112
4.	Ծրագիրը կատարողը	Հայկական բարեգործական ընդհանուր միության (ՀԲԸՄ) Հայաստանի ներկայացուցչություն (ՀՀ, ք. Երևան, Բաղրամյան 40, ՀՎՀՀ 00006479)
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Հայաստանի Հանրապետություն, քաղաք Էջմիածին, հոգևոր
6.	Ծրագրի բյուջեն	25,417,250 դրամ
7.	Բարեգործություն ստացողը	Էջմիածին քաղաքի բնակչություն և Մայր Աթոռ սուրբ Էջմիածնի այցելուներ
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	2025 թվականի մարտի 10-ից մինչև 2025 թվականի նոյեմբերի 30-ը
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	1) Մայր Աթոռ սուրբ Էջմիածնի «Վաչե և Թամար Մանուկեան» մատենադարանի հարակից հանրային տարածքի կաթիլային ոռոգման համակարգի ընթացիկ վերանորոգում՝ ներառյալ նյութերի արժեքը. նախատեսվում է իրականացնել 2025 թվականի մարտի 10-ից մինչև 2025 թվականի նոյեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում՝ 1,200,000 դրամի չափով.

		2) վնասված բույսերի փոխարինում նորով և խոտածածկ տարածքի վերականգնում. նախատեսվում է իրականացնել 2025 թվականի մարտի 10-ից մինչև 2025 թվականի նոյեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում՝ 6,217,250 դրամի չափով. 3) հողային և բարեկարգման սեզոնային աշխատանքներ. նախատեսում է իրականացնել 2025 թվականի մարտի 10-ից մինչև նոյեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում՝ 18,000,000 դրամի չափով:
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	1) կաթիլային ոռոգման նոր համակարգի ընթացիկ վերանորոգման աշխատանքներ՝ 1,200,000 դրամ. 2) վնասված բույսերի փոխարինում նորով և խոտածածկ տարածքի վերականգնման աշխատանքներ՝ 6,217,250 դրամ. 3) սեզոնային հողային և այգեգործական աշխատանքների շրջանում հանրային տարածքի բարեկարգման աշխատանքներ՝ 18,000,000 դրամ
11.	Ծրագրի իրականացման կազմակերպական ծախսերը	Ծրագրի իրականացման համար լրացուցիչ կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում:
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման և այլ մարմինների հետ	Մայր Աթոռ սուրբ Էջմիածին, Էջմիածնի համայնքապետարան
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	ՀԲԸՄ-ի կողմից մշակված ծրագրի արդյունավետության գնահատման գործիքակազմի կիրառում: Ֆինանսական և նկարագրային հաշվետվություններ են ներկայացվում Հայկական բարեգործական ընդհանուր միության (ՀԲԸՄ) կենտրոնական վարչությանը: ՀՀ կառավարության 2003 թ. հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

21.02.2025
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ